



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«24» հունվարի 2019թ.

№ 2/195-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

Է.ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ԵՎ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ԱՆՁՆԱԿԱՆ
ԿՆԻՔՆԵՐԸ ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՆՁՆԱԿԱՆ
ԿՆԻՔՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 175-Ա հրամանով հաստատված կարգի 5-րդ, 6-րդ և 11-րդ կետերով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի 1-ին բաժանմունքի մաքսային տեսուչ Էրիկ Ղարիբյանին ամրակցված թիվ 296 և նույն մաքսային կետ-բաժնի 3-րդ բաժանմունքի գլխավոր մաքսային տեսուչ Արտյոմ Եղիազարյանին ամրակցված թիվ 922 անձնական կնիքները ճանաչել անվավեր և հանձնել պահեստ՝ գործածության համար ոչ պիտանի լինելու պատճառով:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի 1-ին բաժանմունքի

մաքսային տեսուչ Էրիկ Ղարիբջանին հատկացնել թիվ 1003 և նույն մաքսային կետ-բաժնի 3-րդ բաժանմունքի գլխավոր մաքսային տեսուչ Արտյոմ Եղիազարյանին հատկացնել թիվ 1004 անձնական կնիքները:

Հիմք՝ Գործերի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Մկրտչյանի զեկուցագիրը:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 1/24/2019 13:22:39 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142



Դ.ԱՆԱՆՅԱՆ